

4. Հայկական ՍՍՀ-ի ներսում բնակչության տեղաշարժերը, որոնք հանգեցնում են նրա վերաբաշխմանը տարբեր պատմա-ազգագրական շրջանների քաղաքների և գյուղերի միջև, թե տեղերում և թե քնդհանուր առմամբ ֆիքսվում են ոչ այնքան կատարյալ ձևով: Այսպես, ոչ անձազրաջին սեղանների տվյալները, որոնք ցնթացիկ վիժակագրության միակ աղբյուրն են, ոչ մարդահամարների տվյալները, բացի միզրացիոն մնացորդներին /սալո/ վերաբերող տեղեկություններից /այն էլ ոչ միշտ ամբողջական, այլ համաժողովրդական, համակարգման չենթարկվող/, չեն բավարարում հաջող վերլուծության անհրաժեշտ պահանջները: Կենսական իրադրությունների կենսագրական ֆիքսումը, որը հարավոր է դարձել մասսայական հարցման շնորհիվ, թույլ է տվել պարզելու ինչպես աղբյուրների էկոլոգիական քնդգորկման ծավալը /դիսպազոն/ և ներհանրապետական միզրացիաների ուղղությունները, այնպես էլ հանրապետության բնակավայրերի, շրջանների բնակչության ձևավորման բնույթը: Ընդ որում, ձեռքի տակ ունենալով այդ խմբերի բնութագրումների բազմապիստությունը, հարավոր է դառնում այլ կարգի /տնտեսագիտության, պատմության, ազգագրության/ նյութերի ներգրավվումը, որը հնարավորություն է քննդուրում անցկացնելու յուրաքանչյուր բնակավայրի, շրջանի բնակչության փոփոխման վրա ազդող գործոնների վերլուծությունը դիտարկելի անցյալի տարբեր ժամանակահատվածներում, այլ խոսքով, լայն քնդհանրությունների և տիպաբանությունների բավարար հիմք է ստեղծվում:

Մ. Գ. ԿԻՐԱՎՈՍՅԱՆ

ՀԳԹ

ՍՍՍՌԻՆՑԻՆԵՐԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԵՎ ԿԱԼՍԵԼՈՒ

ԳՈՐԾԻՔՆԵՐՆ ՈՒ ԱՇԽԱՏԱԵՂԱՆԱԿՆԵՐԸ

1. Սասունը զավառի տնտեսական ու քաղաքական կյանքն ուսումնասիրված է հարցերի բազմակողմանի քնդգրկմամբ: Սակայն Սասունի երկրագործական գործիքներն ու աշխատեղանակները գրեթե հետազոտված չեն, չնայած որոշ հարցեր 1930-1960-ական թթ. մասնակիորեն շոշափվել են /տես՝ Վ. Գեոտյան, Ե. Կարապետյան, Վ. Բղոյան/:

Այս հարցը քննելու համար բավարար նյութ է տալիս Հայաստանի պատմության պետական թանգարանում պահվող Սասունի երկրա-

գործական գործիքների հավաքածուն, ինչպես և Քալիկի ու Աշտարակի շրջանների նախկին սասնաբնակներից հավաքած տեղեկությունները:

2. Սասունի ըերքահավաքի գործիքները ժամանակի ցնթացքում ենթարկվել են արմատական փոփոխությունների՝ ուղիղ բրիչաձողից վերածվել երկաթե խոտկեռերի:

Սասունի լեռնային շրջաններում գ ե ռ ա ն դ ի շ ի օգտագործվել, հնձի հիմնական գործիքը մ ե ծ մ ա ն գ ա ղ ն է եղել, որով հարել են թե հացարույսերը, թե խոտը: Տերևավոր մյուղեր, հաստացողուն բույսեր կտտելու և դիզելու են ծառայել մ ա ն գ ա ղ ու և մ ա ն գ ա ղ ա ծ և լ ու գ գործիքները: Յոբենի, կորեկի, գլգիլի խուրճերը կապիլու, բառալու և դեզ դնելու համար օգտագործվել է կտուցածև կեռիկ գործիքը, որը կոչվել է գ ե ո: Բերքահավաքի ժամանակ լայնորին օգտագործվել են փայտե և մետաղե հղաններն ու փոցիքերը և փայտե հ ո թ ս ան լ ի ն:

Երկրագործական գործիքների մի այլ խումբ գործածվել է հացահատիկն ու անասնակերը վերամշակելու՝ կալսոցի ժամանակ: Այսուամբ կատարվել է գ ո ո ի՝ կալում եղներին շարքով շրջած օրանի վրայով քշելու, այն տրորել տալու միջոցով: Կամ շ ի եղել: Կալսման օժանդակ, քայց անհրաժեշտ գործիքները եղել են գ ա լ ի թ հ ա կ ք, ժ ն ջ ի լ ք /շղթա/, չ վ ա ն ք /պարան/, ց ա ի ա վ ե լ ն ու ա վ ե լ ք:

Գործարանային երկրագործական գործիքները դժվարություններ են մուտք գործել Սասունի լեռնային շրջանները:

Կալսած բերքը մաղվել է երեք տարբեր տեսակի մաղով, իսկ ս ք ո ա տ /լայնանցք/ մաղով, ապա՝ ք ան թ մ ա ղ ո վ, վերջում՝ փ ո գ մ ա ղ ո վ:

Նշված գործիքները պատրաստվել են Սասունի զրեթե բոլոր շրջաններում, սակայն հիմնական կենտրոնը տեղում անհրաժեշտ հումքով հարուստ Տալվորիկն է եղել:

4. Տեղական որոշակի առանձնահատկություններով հանդերձ, դրանք ունեցել են քնդհանրություններ պատմական Հայաստանի մրյուս, մասնավորապես Ծոփքի, Խարլնորդի, Մոկսի լեռնային բարձրադիր շրջաններում տարածված գործիքների հետ:

5. Ինչպես հողի մշակման, նույնպես ըերքահավաքի ու կալսման ցնթացքում, Սասունում ցնդունված է եղել խմբական աշխատանքը, որը փոխօգնության ավանդական դարձած սովորույթ է եղել՝ հարակաշի համակարգով:

Մեծ եղեռնից փրկված սասունցիները թալիսի և Աշտարակի շրջաններում երկար ժամանակ կարողացան պահպանել հնձի ու կալսման գործիքներն ու աշխատեղանակները:

Գ.Վ. ՀԱԿՈՔՅԱՆ

ԼԻ

ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԱԶԳԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ

ԼԵԶՎԱՔԱՆԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

1. Երևույթի անվանման մասին. Կա միշտ ձեռքբերովի ազգակցության մի կարգ, որ խորհրդակցելի է կոչել երկրորդային, հետևյալ նկատողություններով. ա/ամուսնուցումը ձեռքբերովի ազգակցության հետ չշփոթելու համար, ք/երկրորդային ազգակցության եզրերը փոխարինում կամ լրացնում են բուն ազգակցության եզրերին՝ կենսաբանական անփոփոխականներին, և նրանց համեմատ ունեն երկրորդային բնույթ /հմտ. մայր՝ մորու, դայեակ, ստտու, մայրագիր, հոգեմայր, կնքամայր. զաւակ՝ որդեգիր, ուրջու, սան, խորթ, խոստովանադուստր ևն/, գ/երկրորդային ազգակցության անունները սովորաբար բաղադրյալ են՝ կառուցված բուն ազգակցության անուններից /տես վերը բերված օրինակները/:

2. Բուն և երկրորդային ազգակցության տարբերությունները.

ա/բուն՝ ազգակցությունն ունի կենսաբանական և հասարակական հիմք, երկրորդայինը՝ լույ հասարակական, ք/բուն ազգակցության հարաբերություններն արյունակցական են և ձեռքբերովի /ամուսնուցումը/, միջնորդավորված են և անմիջական /հմտ. հայր-հորեղբայր, քոյր-քեռայր/, իսկ երկրորդային ազգակցության հարաբերությունները միայն ձեռքբերովի են և միայն անմիջական՝ չեն ենթադրում սերնդե-սերունդ փոխանցում/։ գ/բուն ազգակցության կենսաբանական օրինաչափությունները վերաբերում են զրեթե բոլոր կենդանի օրգանիզմներին, երկրորդայինը հատուկ է միայն մարդկային հասարակությանը. դ/բուն ազգակցությունը չունի ժամանակային կամ տարածական սահմանափակումներ /տեսականորեն բոլոր մարդիկ ազգականներ են/, երկրորդային ազգակցությունը պատմական երևույթ է, մշակույթի արդյունք. ե/բուն ազգակցության համամարդկային բնույթը պայմանավորված է սերնդափոխության ընդհանրականությամբ, երկրորդայինինը՝ թարոյականության/սո-